

քան օգուտ կարող ենք քաղել օտար մտաւորական հարստութիւններէն, որոնց մեր ուղեղը վերջ ի վերջոյ կը ձեւափոխէ նիւարաղբը՝ նորարար յատկութիւնները միայն պահելով, եւ այն աստիկ պիտի գիտնանք Պ. Սոփոն Պեղիբձեանի ալպոմին ընել այն ընդունելութիւնը որուն արժանի է եւ զոր սրտանց կը մաղթեմ իրեն պէս առաջանդ ունեցող անձի մը »

ՏԻԿԻՆ ՄԱՏԱԿԱՆԻ ՄԱՆԸ — Պոլսոյ լրագիրներէն իմացանք տիկին Գայիանէ Մատակեանի մահը, եւ այդ լուրը մեզի խորին ցաւ մը կը պատճառէ։ Տիկին Մատակեան որոշ ու մեծապէս օգտաւէտ գեր մը կատարեց Թրքահայոց մանկավարժական յառաջդիմութեան մէջ ինքն է որ վարպետ-տուտունեբու միջնադարեան դուրսէն կործանեց ֆրեյզպէի մասնկապարտէշներուն սխառմը մեր մէջ մտցնելով, եւ մեր ծաղկողներն իսկ (այսինքն մեր նախակրթարանները, որոնք հակառակ իրենց սիրուն անունին աւելի խամրոց) կոչելու արժանի հաստատութիւններ էին, տիկին Մատակեանի գործին ազդեցութիւնը կրեցին եւ հիմնովին կերպարանափոխուեցան։ Նորասեր, գործունեայ, ձեռներէց ու յանդուգն տիկին Մատակեան ամէն տեղ եւ ամէն շրջանակի մէջ ջանադիր եղած է Հայոց բարեգործն մէջ հետզհետէ աւելի եւրոպացմանը մտցնելու։

Գովկասի թերթները կը հաղորդեն թէ ինքն է առաջին հայ օրիորդը որ յաղթելով բոլոր նախադասչուսներուն, Ներսիս գաղան է ուսում ստանալու, եւ ինքն է որ Գովկասի կրթական հաստատութիւններուն օգտին համար սիրողներու կողմէ խաղաղուած թառերեան ներկայացուցներ ստրգած է՝ որոնց ինքն այ մասնակցած է։ Պոլսոյ մէջ, ինքն էր որ զրական երեկոյթներ կազմակերպեց առաջին անգամ, ընտանեկան հաւաքումներ որոնց մէջ գրադէտներ ու զբասէր օրիորդներ ու պարոններ կը համախմբուէին մասաւորական խօսակցութիւններով կամ զրական խաղերով քանի մը ամսեր անցընելու, ինչ որ ասորիք նորութիւն մըն էր մեր թղթախաղով կամ բամբասանքով կազմուած սովորական երեկոյթներուն մէջ։ Ինքն է զարմեայ որ Բերայի աղջկանց արուեստանոցին հիմնադրութեանը գործակցեցաւ, ու յետոյ անոր մէջ կիրակնօրեայ դասախօսութիւններ հաստատեց հայ վարժաւէիներու համար։ Պոլսոյ թերթներէն կ'իմանանք որ այս վերջին տարիներուն մէջ, Բերայի Հայ աղբ արքայախնամ ընկերութեան ամենէն անձնուէր եւ ամենէն կենդանի ուժը ինքն է կազմուի։ Գիտազիտ ու խաղաղաւառ աշխարհութեան գեղեցիկ ու հազուադէպ դէմք մըն է որ կ'անհետանայ մեր մէջէն, եւ տխրութեամբ

կ'արձանագրենք այս կորուստը։ Անոնք որ մօտէն ճանչցած են տիկին Մատակեանը, պիտի չմոռնան բոլոր գեղեցիկ բաներուն համար յիմարաբար խանդավառուող, ամէն հանրօգուտ գործի համար ինքզինքը ամբողջութեամբ նուիրող այդ քաջ ու մաքուր հոգին, եւ յարգանքով պիտի յիշեն այդ անունը որ հոմանիշ կարող է մնալ ամենաթանկագին յատկութեան մը որ մեր մէջ շատ քիչ տարածուած է, ձեռներեցութեան։



ՄԻԽԻԹԻՆ Ի ԵՐԱՌՈՒՋԱՐԻՐԻՐԱԾԵԱՑ

ՅՈՒՐԵԼԵԱՆԸ

— 0 —

Վենետիկի Միխիթարեան միաբանութեան կողմէ Հ. Ղեւոնդ Ալիշան հետեւեալ հրահէրը զրկած է Անհաշխոյի խմբագրութեան, ինչպէս եւ ազգային աղէն հաստատութեանց։

Նոր Իրզ դարուս հետ կը սկսի Գ. Զար Միխիթարեան Ուխտիս, զոր երջանիկ հայր մեր հաստատած է Աստուծոյ եւ Աստուածամոր նախախրնամութեամբ՝ ի 8 Սեպտեմբերի 1701 տարւոյ։ Փառաքելով այս երկուհարեւր ամեայ Յորեկելին յիշատակը՝ ըստ կարի մերում եւ ըստ տեղաբնական՝ արժանաւորապէս կատարելի ի միջոցի լրման եւ յարման երկու անցեալ դարուց եւ Դին, յ8 Սեպտ. 1901, պարտք երախտագիտութեան համարիմը՝ ոչ միայն ծանուցանել մեր պատուական ազգայնոց, ուրոց բարոյական օգտին նուիրած են Հայր մեր Միխիթար եւ իր որդիքն՝ իրենց նպատակ ջանքն ու յիշատակը, այլ եւ համարակիմը խնդրել իրենց բարեյօժար կարելի նիւթական նպատքը, ի պէտս ծախուց պատրաստութեան հանգիսի եւ մնալուն յիշատակաց Յորեկեանին, որոյ համար այլ եւ այլ գրաւոր վայելչապիղ գործք առաջարկուած են սկըստած այլ են ի հրատարակութիւն, ի պատիւ նախաօրս մերոյ եւ ի վայելս զինքն եւ իր գործը յարդողաց, որոց ընծայաբերութեանց կամ տրից համեմատ՝ կ'ելլէ իրենց այլ մասն՝ այն հրատարակեալ յիշատակներէն, եւ անկարողաց այլ նպատակուն՝ մնան ձրի բաշխելիք ինչ։

Եթէ լուրթին Հայոց, յերս ինչ տարբեր տեսութիւն ունեցեր է եւ ունի, սակայն հարկ

է խոտովանիւր որ դրեթէ առնասարակ ազ-
նուապէս միաբանն է այս երկրորդականայ
չըջանին մէջ՝ ի յարգութեան՝ առ Հայր մեր
Մխիթար, ճանչնայով զնա մի ի գերագոյն բա-
րերարաց, երախտաւորաց եւ պարծանաց իւ-
րոց, որոց համաձայն՝ տարազգիք անդամ տե-
սողք իր կանգնած եւ կանոնած վանաց եւ
վարժից, վկային գովութեամբ եւ զարմա-
նօք:

Ձեռք տարակուսիւր որ այս նոր երրորդ
գարուս սկզբան եւ ընթացից մէջ՝ նորոգէ
հայրն Մխիթար իր եռաշնորհ հոգին՝ Աստու-
ածաբնութեան, ընկերաբնութեան եւ իմաս-
տաբնութեան՝ յորդիս իւր, եւ ըլլայ ան-
զպար թափախ վասն Ազգիս, ճանակցելով
իր եւ մեր նախնի երանաւատ Սուրբ Հայր
լուսաւորչաց Հայոց:

Հ. ԴԵԻՌՆԻ Մ. ԱԼԻՇԱՆ

Աւելորդ կը համարինք ըացատրել կարեւո-
րութիւնը հանդէսին գոր Մխիթարեան միա-
բանութիւնը մտադրել է կազմակերպել. մեր
ժողովրդին համար Մխիթարի անունը Սահակի,
Մարտիկի, Ստեփանի անուններուն հաւասար
սիրելի եւ նուիրական անուն մըն է. անոր յի-
շատակը տօնելով, մեր ազգը յարգանք մա-
տուցած պիտի ըլլայ իր աստուերական ու բա-
րոյական ամենէն գեղեցիկ յատկութիւննե-
րուն՝ որոնց հզօրագոյն խառնումներն մէկը
կոչու Մխիթար, ինչ վերապահումներ ալ որ
ունենանք Վանքին մտաւորական արդի կա-
ցութեանը մօտին, ամենք ալ պարտաւոր ենք
պատկանելով խոնարհիլ այս հրաւերին առ-
ջեւ գոր Վանքը կ'ողջ տօնուես եւ ուր մեծ
Մխիթարեան մը, մեծ Հայու մը յիշատակին
չուրջը համախմբուի կ'առաջարկէ Անհրաժեշտ
է որ ամէն կողմէ, Հայութեան բոլոր հատու-
ածները, բոլոր կուսակցութիւնները մասնակ-
ցին այդ հանդէսին եւ իրենց օժանդակու-
թեանը շնորհին, որպէս զի ան ըլլայ ինչ որ
պէտք է, այսինքն հոյակապ ու ազնիւ համա-
կուսարմ մը ազգային բոլորութեան հայ-
րենիքի ու գրողականութեան սիրոյն ամենամեծ
վաստարաններէն մէկուն չուրջը: Արտասա-
մանի բոլոր գաղթականութիւնները պէտք է
որ պատգամաւոր մը զրկին այդ հանդէսին,
կ'իմանանք որ Հ. Թուրքիան, տաղանգաւոր
Մխիթարեան մը, մտադրէ է հրաւեր կարգաւ
Բարեգի հայ գաղութին որպէս զի պատուիրակ
մը զրկէ Վենետիկ՝ Մխիթարի յորդեանին,
Բարեգի հայ գաղութը, որուն մէջ կան մէկէ
աւելի Մխիթարեանց նախկին աշակերտներ
(Թ. Իսախան, Վ. Սվանաւան, Է. Շահին, Վ. Մոզ-
եան, եւն.) անշուշտ սիրով պիտի պատասխա-
նէ Հ. Թուրքիանի կոչին, ու բոլոր միւս գա-
ղութները ինչպէս եւ բոլոր հայ խմբակներն

ու մարմինները, պիտի հետեւին անտարակոյս
Բարեգի գաղթականութեան օրինակին:

2.

ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Բանասէր. — «Բանասէր»ը, որ իր երկ-
րորդ տարեյելմը մտաւ արդէն, ըացարձակա-
պէս արժանի էր այն յաջողութեանը զոր գը-
տաւ եւ որ, մինչեւ ցարդ աւելի բարոյական
քան նիւթական, կը յուսանք պիտի աճի եւ
ամրանայ հեղեղեալ: Շատ տարբեր կարգ մը
թերթերէ որոնք վերջերս սունկի պէս բուսան
ամէն կողմ արտասանմանի հայ գաղթութեան
մէջ՝ աւելի անձ մը ապրիցնելու կամ այս ու
այն կրքերուն յագեցու մտալու ճշդիմ նպա-
տակով, այս թերթը կուգար իրական պէտք մը
գոհացնել: Բանասիրութիւնը մեր մէջ կրօնա-
կան հաստատութեանց միանշնորհ դարձած էր
մինչեւ հիմա, եւ Արարատ»ը, «Բազմավէպ»ն
ու «Հանդէս ամսօրեան», հակառակ (մանաւնդ
վերջինս) հայկական գրողութեան մատուցած
չափ կարեւոր ծառայութիւններուն, ունին
անխուսափելի թերութիւն մը, այն է արգելք
կրօնական, պատմական, ընկերաբանական այլ
եւ այլ խնդիրներու վրայ ըացարձակ ազատու-
թեամբ խորհրդածելու, արգելք որ այդ հան-
դէսներուն կրօնական միաբանութեանց կողմէ
հրատարակուելէն կը ծագէր: Բարեգի պէս
ազատախոհ կեդրոնի մը մէջ, գիտական
նոր ու ազատ դաստիարակութիւն ստացած
աշխարհական բանասէրներու խումբի
կողմէ հրատարակուող հանդէս մը, զգալի
պակաս մը լրացնելու սահմանափակ էր: Պէտք
է զովիլ երեք կրօնական հանդէսները այն
ազնիւ ու անսխալանձ համակրութեանը
համար որով ողջունանցին ու քաջալերեցին
իրենց նորածին եղբայրակցին երեւումը,
Լուի թէ «Բանասէր»ը արդէն իրականացուց
իր միաբան ընթացքին մէջ ամէն ինչ որ կը
սպասուէր այդ լայն ու դժուարին ծրագրին
ունեցող թերթէ մը, ճշմարտութեան դէմ մե-
ղանչել պիտի ըլլար Մինչեւ ցարդ «Բանասէր»ը
հրատարակեց հատուածական տեսութիւններ,
հում նիւթեղէններ, անմատչելի երեւան հա-
նուած տղերմաններ. ու դու չերեւցան եւ